

Հաստատում եմ՝



Տնօրեն՝ Ն. Ջհանգիրյան

<< 18 >> 06 2023թ.




Ծրագիր

“Փոքրիկ մաթեմատիկոսը” խմբակի

(Շաբաթական 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ)

Արավուսի տարրական դպրոց

Խմբավար՝  Նելլի Բաղդասարյան

2023-2024 ուս. տարի

“Փոքրիկ մաթեմատիկոսը” խմբակի նպատակն է հետաքրքրաշարժ խաղ-խնդիրների, հարցերի և առաջադրանքների միջոցով սովորողների մեջ զարգացնել պատկերային մտածողություն:

Ձևավորել հմտություններ, կարողություններ կատակ-հարցերն ու խնդիրները հեշտ ու արագ կռահելու, ճկուն դատողություններ կատարելու ունակություններ:

Տրամաբանական խաղերը, խնդիրներն ու խճճված ալգորիթմները սովորողներին ներգրավում է մաթեմատիկայի զարմանահրաշ աշխարհը, որտեղ նրանք կզգան հետաքրքրաշարժ մաթեմատիկայի գեղեցկությունն ու սպասված անակնկալ արդյունքները: Տրված խնդիրներն ու առաջադրանքները կնպաստեն սովորողների մաթեմատիկական գիտելիքների խորացմանն ու ամրապնդմանը:

- Ջարգացնել տարբեր եղանակներով տվյալներ հավաքելու և դրանք հարմար ձևով կազմակերպելու կարողություն,
- Ջարգացնել աղյուսակներ և տրամագրեր կիրառելու կարողություն,
- Ջարգացնել վերլուծման, վերացարկման կարողություններ,
- Ձևավորել գիտելիքներ և կարողություններ տրամաբանական խնդիրների և դրանց լուծման մասին,
- Սովորեցնել ճշգրիտ օգտագործել մաթեմատիկական լեզուն,

Մաթեմատիկական տրամաբանական խնդիրների, առաջադրանքների ուսուցումը հնարավորություն կընձեռնի.

- Գիտենալ ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ,
- Նկատել տվյալների հաջորդականություններում օրինաչափությունները և մեկնաբանել,
- Կատարել փորձեր, գրանցել արդյունքներն ու վերլուծել դրանք,
- Խնդիրներ կազմել, գտնել օգտակար քայլեր հետաքրքրաշարժ խնդիրների լուծման համար (գետանց, լաբիրինթոս, դոմինո, մատիտի մեկ հպումով գծվող պատկերներ), առօրյա և խաղային խնդիրների մոդելներ ստեղծել,
- Հետազայում օգտագործել ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները տարբեր խաղ-մրցույթներում հաջողությունների հասնելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակներում էլք գտնելու համար:

Ծրագրում ներառված են թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրությունների, հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարմանը: Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով գիտելիքի, մաթեմատիկական տրամաբանության, կարողությունների և հմտությունների զարգացման վրա:

## ՈՒՐԱԽ ՄԱԹԵՄԱԹԻԿԱ (9 ԺԱՄ)

### Նպատակ

Զարգացնել և մարզել տրամաբանությունն ու մաթեմատիկական մտածողությունը, ուրախ և հետաքրքրաշարժ հարցադրումներով և վարժանքներով հետաքրքրություն առաջացնել առարկայի նկատմամբ:

### Խնդիրներ

Հետաքրքրություն առաջացնել առարկայի նկատմամբ՝ ստեղծելով ուրախ և գրավիչ միջավայր:

Զարգացնել մաթեմատիկական մտածողությունը, կենտրոնանալու ունակությունը, մատների մանր մոտորիկան:

### Վերջնարդյունքներ

Ակտիվ և պատրաստակամ կմասնակցի խմբակին:

Կդերսևորի տրամաբանական և սրամիտ մտածողություն, արագ կողմնորոշվելու ունակություն, ուշադրության կենտրոնացում:

### Բովանդակություն

1. Կատակ հարցեր (1 ժամ)
2. Եղեք ուշադիր (1 ժամ)
3. Մատների մեկ հպումով (1 ժամ)
4. Ով կպատասխանի առաջինը (1 ժամ)
5. Լուցկին նաև խաղալիք է (1 ժամ)
6. Չողիկներով հավասարություններ (1 ժամ)
7. Հետաքրքրաշարժ մաթեմատիկա (1 ժամ)
8. Հնարամտության խնդիրներ (1 ժամ)
9. Զվարճալի խնդիրներ (1 ժամ)



## ՅՈԹ ՉԱՓԵՔ, ՄԵԿ ԿՏՐԵՔ (9 ԺԱՄ)

### ՆՊԱՏԱԿԸ

Ամրապնդել երկարության, ժամանակի, զանգվածի չափման միավորները:

Լուծել տրամաբանական և հետաքրքրաշարժ վարժություններ և խնդիրներ՝ օգտագործելով չափման միավորները:

Զարգացնել արագ կողմնորոշվելու, ստեղծագործելու, պատճառահետևանքային կապերի բացահայտման հմտությունները:

### ԽՆԴԻՐՆԵՐ

Զարգացնել տարածության մեջ կողմնորոշվելու և ելք գտնելու ունակությունները:

Զարգացնել դժվար և անելանելի թվացող հարցերի պատասխանները և տարաբնույթ տարբերակներով լուծելու ունակությունը:

### ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Համարձակ կարտահայտեն իրենց տեսակետը՝ հիմնավորելով և ապացուցելով սեփական կարծիքն ու որոշումը:

Կտիրապետեն տրամաբանական վարժանքների լուծման մոդելներին և մոտեցման ձևերին:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ջուրն իր ճամփան կգտնի (1 ժամ)
2. Ով՝ որքան (1 ժամ)
3. Դատարկ վանդակ (1 ժամ)
4. Լաբիրինթոս (1 ժամ)
5. Կորչեն աստղանիշները (1 ժամ)
6. Ժամացույց (1 ժամ)
7. Իմաստուն բաժանում (1 ժամ)
8. Ծանր ու թեթև արեք (1 ժամ)
9. Յոթ չափիր, մեկ կտրի (1 ժամ)

## <<ԿԵՆԳՈՒՐՈՒ>>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԸՆԴԱՌԱՋ (9 ԺԱՄ)

### ՆՊԱՏԱԿԸ

Վարժանքների միջոցով ձեռք բերել համապատասխան գիտելիքներ և հմտություններ մրցույթի ձևաչափում առկա խնդիրների և վարժությունների լուծման համար:

### ԽՆԴԻՐՆԵՐ

<<Կենգուրու>> մրցույթին առավել պատրաստված, իրազեկված և համարձակ մոտեցում ցուցաբերել:

Անսխալ կարողանալ լրացնել պատասխանների թերթիկը:

Զարգացնել այլընտրանքային մտածողություն, տրված տարբերակներից կարողանալ ընտրել ճիշտ պատասխանը:

### ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները կձառայեցնեն մրցույթին առավել վստահ մասնակցելու համար:

Մաթեմատիկա առարկան կդառնա ավելի գրավիչ և սիրելի:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. 3 միավոր գնահատվող խնդիրներ (2 ժամ)
2. 4 միավոր գնահատվող խնդիրներ (2 ժամ)
3. 5 միավոր գնահատվող խնդիրներ (2 ժամ)
4. Պատասխանների թերթիկ լրացնելու ձևը (1 ժամ)
5. Ստուգատես (2 ժամ)

## ԹՎԵՐԻ ԵՎ ՏԱՌԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ (7 ԺԱՄ)

### ՆՊԱՏԱԿԸ

Տառերով և թվերով կազմված մաթեմատիկական խաղ-առաջադրանքներով հարստացնել աշակերտների աշխարհընկալումը, հնարավորություն ընձեռնել ինքնուրույն կազմելու նմանատիպ վարժություններ:

### ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ստեղծել միջառարկայական կապ մաթեմատիկայի և մայրենիի մեջ:

Մայրենի լեզվի նկատմամբ ունենալ մաթեմատիկական մոտեցում՝ առավել գրավիչ դարձնելով այն:

Զարգացնել տրամաբանական մտածողությունը:

### ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կկարողանան տրամաբանել և տառերի օգնությամբ գտնել թաքնված թվերը:

Կընդլայնեն միջառարկայական մտահորիզոնը՝ այլ գիտությունների մեջ փնտրելով և գտնելով մաթեմատիկական տրամաբանություն:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տառաշղթաներ (1 ժամ)
2. Բառերով խաղեր (1 ժամ)
3. Ծածկագիր (1 ժամ)
4. Գաղտնագրեր (1 ժամ)
5. Գտիր օրինաչափությունը (1 ժամ)
6. Խաչվող թվեր (1 ժամ)
7. Կռահիր հաջորդականությունը (1 ժամ)